ՍԱԿՐԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՐՁ

Պատմ. գիտ. թեկնածու Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի նախնադարյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի տեղայնացումը հնագիտության կարևոր հարցերից է։ Դա բնական է. առանց պարզելու տվյալ մշակույթի տարածման շրջանակները՝ անհնար է բացահայտել այն ստեղծողների պատմական տեղն ու դերը։ Սակայն երբ հուշարձանները խմբավորվում են ոչ միայն ըստ ժամանակի, այլև ըստ տարածության, հանդես է գալիս տվյալ մշակույթին որոշակի անվանում տալու անհրաժեշտություն։ Դժբախտաբար այս հարցի վերաբերյալ դեռևս միասնական կարծիք գոյություն չունի։ Նման իրավիճակը երևան է գալիս նաև սակրերի ուսումնասիրության ընթացքում։ Բազմիցս անդրադառնալով սակրերի ժամանակագրական հետազոտությանը և այդ տեսանկյունից մատնանշելով նրանց ձևերում կատարված փոփոխությունները, ուսումնասիրողները դրանք տարբեր կերպ են անվանել[1] («անդրկովկասյան», «արևելաանդրկովկասյան», «քուռ-արաքսյան», «արևելավրացական», «կենտրոնաանդրկովկասյան»), որը և մատնանշում է նրանց տեղայնացված չլինելը։ Նման իրավիճակը, թույլ չտալով հստակ պատկերացում կազմել առանձին օջախների սակրերին բնորոշ գծերի, առանձնահատկությունների վերաբերյալ, խոչընդոտում է նաև ընդհանրապես տեղայնացման հետ կապված հարցերի լուծմանը։ Ճիշտ է, որոշ հետազոտողներ, նշելով հանդերձ սակրերի ժամանակագրական առանձնահատկությունները, ուշադրություն են դարձրել և այն հանգամանքին, որ դրանց չափերի մեջ կան տարբերություններ (օրինակ, նշվել է, որ «Հայաստանից հայտնաբերված սակրերը խոշոր են»[2])։ Սակայն նման կարծիքը, մութ թողնելով «խոշոր» և «փոքր» հասկացությունների միջև անցկացվող սահմանի ճշտումը, տարակուսանքի տեղիք է տալիս, քանի որ ՀՍՍՀ տարածքում քիչ չեն և փոքր չափեր ունեցող-

---

[1] Տե՛ս А. А. Иессен, К вопросу о древнейшей металлургии меди на Кавказе, Изв. ГАИМК, вып. 120, 1935; Б. А. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, стр. 2—4; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 102—116; Д. Л. Коридзе, Археологические памятники Тбилиси, Тбилиси, 1958, стр. 97; К. К. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, стр. 156—158; Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, ТГИМА, т. V, Ереван, 1959, стр. 242—246; С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, стр. 35—40; К. Н. Пицхелаури, Основные проблемы истории племен Восточной Грузии (автореферат). Тбилиси, 1972, стр. 94; Ս. Հ. Դավթյան, Տաշիր-Զորագետի ուշ բրոնզեդարյան մետաղագործության մի քանի հարցեր, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 8, էջ 72—81 և այլն։

[2] Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, стр. 55.

ները[3]. դրանք, սակայն, ամենևին էլ ներմուծված չեն կարող համարվել (եզրակացություն, որն անմիջապես բխում է նման սկզբունքով առաջնորդվելու դեպքում)։ Ինչպես կտեսնենք ստորև, Անդրկովկասի տարբեր վայրերից հայտնաբերված սակրերը իրարից տարբերվում են ոչ թե ընդհանուր մեծությամբ, այլ տարբեր մասերի միջև եղած համամասնություններով, ինչպես և որոշակի հատկանիշներով, որոնք ուշադրությունից վրիպում են դիտողական և նկարագրական ուսումնասիրության ժամանակ։ Այդ բոլոր համամասնությունների և հատկանիշների վերհանումը թույլ է տալիս բացահայտել տեղական օջախներին հատկանշական սակրերի առանձնահատկությունները։ Զգտելով հնարավորին չափ շատ և օբյեկտիվ տվյալներ ստանալ, մենք նպատակահարմար ենք գտել հետազոտությունը վարել սակրերի համամասնությունների հաշվարկման և բոլոր հատկանիշների բացահայտման եղանակով, որն առաջին անգամ է կիրառվում սակրերի ուսումնասիրության ընթացքում։ Հնարավորություն տալով նախօրինակի բացակայության դեպքում օգտվել մասշտաբից զուրկ լուսանկարից (պայմանով, որ այն լրիվ պրոֆիլ լինի), այս մեթոդը օբյեկտիվ տվյալներ է տալիս սակրերի չափերի մասին։ Սա կարևոր է. Անդրկովկասում հայտնաբերված սակրերը, պահվելով ՍՍՀՄ տարբեր քաղաքների թանգարաններում, հրատարակված են նաև մասշտաբից զուրկ լուսանկարներով, որը թույլ չի տալիս պատկերացում կազմել նրանց չափերի վերաբերյալ։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ փորձել ենք սակրերի համամասնությունները բացահայտել իրը պայմանականորեն մասնատելու, երկրաչափական պարզ պատկերներ ստանալու եղանակով։ Վերջիններիս անկյունները, հասկանալի է, բոլոր դեպքերում հավասար լինելով (նախօրինակը և լուսանկարը) տալիս են նույն արդյունքները։ Ընդ որում ընտրված են այնպիսի անկյուններ, որոնց չափումները թույլ են տալիս պատկերացում կազմել աշխատաբերանի, կոթառի և սակրի ընդհանուր մեծությունն արտահայտող համամասնությունների վերաբերյալ։ Ինչպես երևում է № 1 նկարից, բոլոր հաշվարկները կատարված են առանցքային Ա—Բ գծի վրա կառուցված անկյունների չափման միջոցով։ Այստեղ $<\alpha_1$ բացահայտում է աշխատաբերանի լայնությունը, նրա թևիկների հեռավորությունը. $<\alpha_2$-ը՝ աշխատաբերանի երկարությունը, $<\alpha_3$-ը՝ սակրերի երկարությունը. $<\alpha_4$-ը՝ կոթառի մեջքի լայնությունը. $<\alpha_5$-ը՝ կոթառի ներքին մասի լայնությունը։

Համամասնություններից բացի, ինչպես նշվեց վերևում, հաշվի են առնվել նաև սակրերի բոլոր հատկանիշները, համարակալվելով հետևյալ կերպ. I.—սրվող թևիկներով ավարտվող աշխատաբերաններ, II.—սեգմենտաձև աշխատաբերանով սակրեր, III.—կտրված թևիկներով աշխատաբերաններ, IV.—ներս թեքվող թևիկներով ավարտվող աշխատաբերաններ, V.—թևիկների արտաքին կողմից թեթևակի ներճկվածք ունեցող աշխատաբերաններ, VI.—հարթ մեջք ունեցող կոթառներ, VII.—մեջքի կենտրոնում ելուստ ունեցողներ, VIII.—սապատաձև կոթառներ, IX.—ատամնավոր մեջքով կոթառներ, X.—կոթառներ, որոնք ունեն Π-ձև զարդ, XI.—Τ-աձև զարդ ունեցող

3 ՀՍՍՀ-ում հայտնաբերված սակրերի չափերը տատանվում են 14,5—19,5 սմ միջև։ Հիմնականում այդ սահմաններում են հանդես գալիս և ՎՍՍՀ ու Ադրբեջանական ՍՍՀ տարածքներից հայտնաբերվածները։

կոթառներ, XII.—m-աձև զարդով և XIII.—այլ զարդաձևեր ունեցող կոթառներ։

Այս եղանակով ուսումնասիրել ենք Անդրկովկասի տարբեր հուշարձաններից հայտնաբերված 97 սակր։ Ստացված արդյունքներով կազմել ենք աղյուսակներ, որոնց հրատարակումը անհրաժեշտ չենք համարում տեքստի ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով։ Այսուհանդերձ, սկզբունքը պարզ դարձնելու ցանկությամբ բերենք մի քանի օրինակ՝ այս կամ այն հատկանիշի առկայությունը նշելով պլյուս (+) նշանով։

№	Հայտնաբերման վայրը	համամասնություններ					հատկանիշներ													
		α_1	α_2	α_3	α_4	α_5	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XIII
1	Լճաշեն	76	52	104	45	42		+					+						
2	Լենինական	70	55	105	60	54		+					+						
3	Ակներ	60	60	110	46	42			+						+		+		
4	Ալավերդի	64	58	103	45	40			+				+					+	
5	Ախթալա	64	58	106	54	45			+			+						+	
6	Լուսաձոր	56	62	113	44	40	+					+				+			
7	Շիկահող	78	51	100	82	50			+		+		+						+
8	Քաջարան	78	51	105	66	42			+		+		+						+
9	Սառնաղբյուր	48	66	125	42	36	+								+				+
0	Առաջաձոր	72	54	104	58	44			+	+			+						
11	Կոթիգյուղ	66	57	107	50	42			+					+				+	
12	Զանգեզուր	76	52	100	35	33		+				+				+			
13	Գանթիաղի	72	54	98	59	52			+						+		+		
14	Վարդաշեն	48	66	120	46	40	+					+						+	

Ստացված տվյալները կոորդինատային գրաֆիկների վրա տեղադրելով (α_1։ α_2, α_2։ α_3, α_4։ α_5 մեծությունների համար) ստանում ենք հետաքրքիր արդյունքներ։ Պարզվում է, որ Անդրկովկասի տարբեր հուշարձաններից հայտնաբերված սակրերը առանձնանում են՝ 1. աշխատաբերանների համամասնություններով. առկա են լայն (I խումբ— 72°—86°), միջին (II խումբ— 60°—71°) և նեղ (III խումբ— 45°—59°) համամասնություններ ունեցող աշխատաբերաններ, 2. աշխատաբերանի՝ սակրի ընդհանուր մեծության հանդեպ ունեցած համամասնությամբ և 3. կոթառների վերին և ստորին մասերի միմյանց հանդեպ ունեցած հարաբերակցությամբ։ Իրոք, որոշակիորեն խմբավորվում են մեջքի մասում լայն և ստորինում նեղ (α_4=56°—82°, α_5=38°—50°, տարբերությունը $\alpha_4-\alpha_5$=18°—32°), լայն՝ գրեթե ուղղանկյունաձև (α_4=48°—61°, α_5=44°—55°, տարբերությունը $\alpha_4-\alpha_5$=4°—6°) և նեղ (α_4=35°—52°, α_5=33°—44°, տարբերությունը $\alpha_4-\alpha_5$=2°—8°) կոթառներ ունեցող սակրերը։

Նկատենք, որ խմբավորումների ընթացքում երևան է գալիս հետաքրքիր երևույթ։ Հարցն այն է, որ որոշակիորեն նույն խմբերում դասվող (կայուն համամասնություններ ունեցող) սակրերի կողքին առկա են և այնպիսի նմուշներ, որոնք իրենց համամասնություններով (աշխատաբերանի, կոթառի և այլն) տարբեր գրաֆիկներում տեղաշարժվում են, դասվում տարբեր խմբերում (զուրկ են կայուն համամասնություններից)։ Այս փաստը ցույց է տալիս, որ տեղական օջախները մեկուսացած չեն եղել, չեն ունեցել ցայտուն ար-

տահայտված սահմաններ, ուստի այս կամ այն հատկանիշը փոխանցվել է աննկատելիորեն։ Այս երևույթը միաժամանակ մատնանշում է, որ յուրաքանչյուր տեղական օջախ կազմված է եղել միջուկից (կայուն համամասնություններով սակրեր) և այդ միջուկի շուրջը տարածվող, միջուկից աստիճանաբար հեռացող շրջաններից։ Հետևաբար, նույն օջախի հակադիր ծայրամասերի սակրերը ունեն հարևան օջախների սակրերին բնորոշ համամասնու-



թյուններ և հանդես են գալիս իբրև հիբրիդային ձևեր։ Այս երևույթը հանդիպում է նաև հատկանիշների հետազոտության ժամանակ, այն վերապահությամբ, որ ասվածը վերաբերում է հետազոտվող ժամանակաշրջանի ուշ փուլի (մ. թ. ա. XI—IX դդ.) սակրերին։ Ինչ վերաբերում է ուշ բրոնզի I փուլին պատկանողներին, ապա դրանք, հայտնաբերված լինելով Անդրկովկասի տարբեր շրջաններում, զուրկ են կայուն, բնորոշ համամասնություններից և չեն տեղայնացվում։ Հետաքրքիր է այն հանգամանքը, որ նույն արդյունքներն են ստացվում նաև սակրերի հատկանիշների, ձևական առանձնահատկությունների քննության ընթացքում։ Այսպես, Անդրկովկասի ուշ բրոնզի I փուլի սակրերը, չունենալով կայուն համամասնություններ, նման են միմյանց կոթառների գրեթե ուղղանկյունաձև և աշխատաբերանների սեգմենտաձև տեսքով։ Հաշվի առնելով այս բոլորը, կարելի կլիներ I փուլի սակրերը անվարան միավորել նույն խմբում, եթե կոթառի մեջքի ձևով էլ դրանք միանման լինեին։ Սակայն դրանց կոթառների վրա առկա են տարբեր հատկանիշներ, որը և հարկադրում է դրանք խմբավորել առանձին տարբերակների մեջ։

I Տարբերակ.— լայն, գրեթե ուղղանկյունաձև անզարդ կոթառի մեջքի կենտրոնամասում փոքրիկ ելուստ կա, իսկ աշխատաբերանը սեգմենտաձև է։

Նման սակրեր հայտնաբերված են Լճաշենում (նկ. 2₁), Արթիկում[4], Լենինականում, Լոռիբերդում[5], Մինգեչաուրում (նկ. 2₃), իսկ Շամխորից հայտնի է նրման սակրի կաղապար (նկ. 2₄)[6]։ Հետևելով այս տարբերակի տարածման շրջանակներին, նկատում ենք, որ դրանք ընդգրկում են Ալավերդի-Հանքավանի և Շամխոր-Գետաբեկի պղնձահանքերով հարուստ օջախները։

II Տարբերակ.— տարբերվում է առաջինից ելուստի բացակայությամբ. իսկ կոթառի երկու երեսներին երբեմն հանդես է դալիս Π-ձև զարդը։ Աշխատաբերանները նույնպես սեգմենտաձև են։ Այս տարբերակի սակրերը հայտնի են Լճաշենից (նկ. 2₅), Զանգեզուրից (նկ. 2₆), Կախեթից (նկ. 2₇)[7]։ Հետևելով այս տարբերակի հայտնաբերման վայրերին, համոզվում ենք, որ այն նույնպես բնորոշ չէ պղնձահանքերից որևէ մեկին[8]։

III Տարբերակ.— ունի վեր բարձրացող ուսեր և մեջքի կենտրոնում փոքրիկ ելուստ։ Այս մանրամասների շնորհիվ կոթառը ստանում է ատամնավոր տեսք։ Աշխատաբերանը կիսաշրջանաձև է։ Ներկա տվյալներով այս տարբերակի վաղ օրինակները հայտնի են Նավթլուղիի № 1 դամբարանից, Դիզոմիից, Քվեմո-Սասիրեթիից (նկ. 2₈), Քավթիսխեվիից, Մետեխից և թվագրվում են մ. թ. ա. XIII—XII դդ.։ Նմանօրինակ սակր, մ. թ. ա. XI—X դդ. թվագրվող նյութերի հետ հայտնաբերված է Ցագերիում[9]։ Հաշվի առնելով այս տարբերակի տարածման շրջանակները, Դ. Լ. Կորիձեն հնարավոր է համարում Շիդա-Քարթլին դիտել իբրև այս տարբերակի առաջացման կենտրոն[10]։ Մենք հակված ենք ենթադրել, սակայն, որ այս տարբերակը ևս, ինչպես և նախորդ երկուսը, տարածված է եղել ողջ Անդրկովկասում։ Նման ենթադրությունը հավանական է թվում և այն պատճառով, որ ՀՍՍՀ տարածքում բազմաթիվ են այս տարբերակի ավելի զարգացած նմուշները մ. թ. ա. XII—X դդ. թվագրվող հուշարձաններում, հանգամանք, որը խոսում է տեղական

---

[4] А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., СА, 1957, № 2, стр. 148; Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1957, стр. 182.

[5] Նյութը հրատարակության է պատրաստում Ս. Հ. Դեվեջյանը։

[6] Г. М. Асланов, Р. М. Ваидов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, табл. XII; Jacob Hummel, Zur Archäologie Azerbeidžans, „Eurasia Septentrionalis Antiqua", t. VIII, Helsinki, 1933, Abb. 29.

[7] К. Н. Пицхелаури, Древняя культура племен, населявших территорию Норо-Алазанского бассейна, Тбилиси, 1965, табл. XIII, рис. 4.

[8] Դժբախտաբար Զանգեզուրից և Կախեթից հայտնաբերվածները պատահական են, որը խոչընդոտում է նրանց թվագրմանը։ Այդ հանգամանքը առավել ցայտուն է դրսևորվում Զանգեզուրյան նմուշի օրինակի վրա։ Վերջինիս անձնագրում նշված է, որ այն հարթ տապարիկի, «մերձսևանյան» դաշտնատեսակի և երկաթյա նիզակի հետ ՀՊՊԹ է նվիրվել Վահանյանի կողմից։ Այլ մանրամասնություններ, այս ակնհայտորեն տարբեր ժամանակաշրջանի նյութեր պարունակող հավաքածուի վերաբերյալ, բացակայում են։ Անհայտ է նույնիսկ սակրի հայտնաբերման վայրը։ Այս իսկ պատճառով ենթադրում ենք, որ այդ սակրը, եթե նույնիսկ հայտնաբերված է թվարկված նյութերի հետ, անտարակույս վերապրուկային է։ Ինչպես կտեսնենք ստորև, Զանգեզուրի մ. թ. ա. XI—IX դարերով թվագրվող նմուշները զգալիորեն տարբերվում են այս սակրից։

[9] Д. Л. Коридзе, К истории Колхской культуры, Тбилиси, 1965; Д. Л. Коридзе, Позднебронзовые археологические памятники из Тбилиси (Навтлуги), «Вестник Музея Грузии» (ВМГ), т. XVIII-Б, Тбилиси, 1954.

[10] Д. Л. Коридзе, Археологические памятники Тбилиси, стр. 97.

արմատներ ունենալու օգտին։ Վերջապես ուշագրավ է և այն, որ ուշ բրոնզի I փուլում, ինչպես մատնանշում է Կ. Ն. Պիցխելաուրին, կենտրոնաանդրկովկասյան մշակույթում տեղական օջախները դեռևս չեն նկատվում[11]։ Հետևաբար, Շիդա-Քարթլին դիտել իբրև առանձնացված օջախ, որն իր ճաշակն ու արտադրանքն էր պարտադրում հարևան շրջաններին, համոզեցուցիչ չէ։

Հանրագումարի բերելով ուշ բրոնզի I փուլի սակրերի հետազոտությունների արդյունքները, նկատում ենք, որ նրանք, ունենալով վերջնականապես կազմավորված տեսք, համամասնություններով և հատկանիշներով որևէ տա-



րածքում չեն տեղայնացվում։ Այս հանգամանքը թույլ է տալիս համաձայնվել Կ. Ն. Պիցխելաուրիի այն կարծիքի հետ, համաձայն որի ուշ բրոնզի I փուլում Կենտրոնական Անդրկովկասի տարածքում առկա է մեկ միասնական մշակույթ[12]։ Սակայն, ի տարբերություն Կ. Ն. Պիցխելաուրիի, կարծում ենք, որ այդ մշակույթի հարավային սահմանը անցնում էր ոչ թե Արաքս գետից փոքր-ինչ հյուսիս ընկած տարածքով, այլ Արաքս գետով, հավանական է՝ ավելի հարավով։ Դժբախտաբար այդ տարածությունները դեռևս հետազոտված չեն և հետևաբար առկա նյութի հիման վրա հնարավոր չէ պարզել այս հզոր մշակույթի հարավային և հարավ-արևմտյան սահմանները։

Շարունակելով սակրերի հետազոտությունը, նշենք, որ հետագա զարգացման ընթացքում դրանք հանդես են գալիս արդեն տեղական օջախներին բնորոշ հատկանիշներով, որը թույլ է տալիս վերջիններս խմբավորել օջախներին հատուկ ենթատեսակներում։

I ենթատեսակ.— հիմնականում ունեն աշխատաբերանի ($\alpha_1 = 60° — 71°$) և կոթառի ($\alpha_4 = 48° — 61°$, $\alpha_5 = 44° — 55°$) միջին համամասնություններ։ Այս

---

11 К. Н. Пицхелаури, Основные проблемы..., стр. 89.

12 Նույն տեղում, էջ 89։

սակրերի մի մասը կոթառի կենտրոնում ելուստ ունի (I տարբերակ), մյուսների մոտ այն բացակայում է (II տարբերակ), իսկ երրորդների մեջքը ատամնաձև է (III տարբերակ), որը և մատնանշում է այդ հատկանիշների բնորոշ չլինելը տեղական օջախների համար։ Սակայն այս ենթատեսակի սակրերը մյուս մանրամասներում միանման են։ Այդ ընդհանրությունը երևան է դալիս աշխատաբերանի կիսաշրջանաձև տեսքի մեջ։ Ավարտվելով ուղիղ կտրած թևիկներով (IV հատկանիշ), աշխատաբերանը վզիկի միջոցով միանում է m կամ T-աձև զարդ ունեցող լայն, գրեթե ուղղանկյունաձև կոթառին։ Այս ենթատեսակի սակրերը հայտնի են Ախթալայից, Ալավերդուց (մ. թ. ա. XII—XI դդ.), Խաշտարակից, Այրումից, Վարդաքարից (նկ. 2_9), Բազմաղբյուրից և թվագրվում են մ. թ. ա. XI դարի վերջով—X դարով[13]։ Մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով են թվագրվում նաև Սարիթեփեից, Դաշ-Սալախլիից (նկ. 2_{10}) և Նուզգերից[14] հայտնաբերված սակրերը։ Այս ենթատեսակին պատկանող (այսինքն I ենթատեսակ, I տարբերակ) սակրերից վերջինը հայտնի է Մեխչիս-Ցիխեից[15]։ Մ. թ. ա. X—VIII դդ. թվագրվող այս նմուշը (այն հայտնաբերվել է կողքիսյան մշակույթին պատկանող նյութերի հետ) ամենայն հավանականությամբ արտահանվել է Ալավերդու արտադրական կենտրոնից, որտեղ և հիմնականում խմբավորված են այդ սակրերը։ Այս շրջանում են տեղայնացվում նաև սապատավոր կոթառով սակրերը։ Վերջիններս գտնվել են Ենոքավանում, Ախթալայում (նկ. 2_{11}), Կողբում, Կոթիգյուղում, Նոյեմբերյանում (նկ. 2_{12})[16] և Ախալքալակում (նկ. 2_{13})։ Այս սակրերից կոթառի ձևով չի տարբերվում Կոդիսծղարոյում հայտնաբերվածը, որի աշխատաբերանը, չնայած նույնպես ավարտվում է ուղիղ կտրած թևիկներով, բայց ընդհանուր ձևով ավելի շուտ կիսված էլիպս է հիշեցնում, որը բնորոշ չէ ՀՍՍՀ-ում հայտնաբերված սակրերի համար։ Նման ձև ունեն նաև Սամտավրոյի № 591 դամբարանում և Դիզոմիում[17] հայտնաբերվածների աշխատաբերանները, որը վկայում է նրանց տեղական արտադրանք լինելը։ Աշխատաբերանի ու կոթառի ձևերով և համամասնություններով ՀՍՍՀ տարածքում հայտնաբերվածներին են կրկնում Ալավերդում, Ախթալայում (նկ. 2_{14}), Ակներում, Ստեփանավանում[18], Մեղրաձորում, Կիրովականում, Ցխինվալիում (նկ. 2_{15}) գտնվածները, որոնց կոթառները, սակայն, ատամ-

---

[13] А. А. Мартиросян, *նշվ. աշխ., էջ 102—133.* Т. С. Хачатрян, Комплекс бронзовых предметов из сел. Вардакар, *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 3*; А. А. Мартиросян, Т. С. Хачатрян, Комплекс бронзовых изделий из селения Такиа (Агвесадзор), *ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1959, № 11—12։*

[14] М. А. Кашкай, И. Р. Селимханов, Из истории древней металлургии Кавказа, Баку, 1973.

[15] Д. Л. Коридзе, К истории..., табл. X; St. Przeworski, Die Metallindustrie Anatoliens in der Zeit von 1500—700 vor Chr., Leiden, 1935, Taf. III, Abb. 5.

[16] С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, стр. 103—111.

[17] *Նյութը հրատարակված չէ։*

[18] ОАК, т. IV, 1894 г.: М. Е. Сагателов, Археологические находки в урочище Джелаль-Оглы, «Изв. Кавказского отд. Московского археологического общества», вып. I, Тифлисъ, 1904, рис. 5.

նաձև են (III տարբերակ)։ Նման սակրի մոդել հայտնի է Աշաբեթիից[19], իսկ Նաբուցվրեբիում հայտնաբերվածը ձևով ու զարդանախշով ավելի շուտ Ալավերդու արտադրական օջախի սակրերի իմիտացիան կարող է լինել։ Այս ենթատեսակին պատկանող սակրերի կաղապարներ ներկայումս հայտնի են Լենինականից (նկ. 2₁₆)[20] և Գանթիադիից (նկ. 2₁₇)[21], որը և թույլ է տալիս համաձայնել այն հետազոտողների հետ (Գ. Բ. Ավալիշվիլի), որոնք Քվեմո-Քարթլիի նյութերի զուգահեռները տեսնում են ՀՍՍՀ նշված տարածքում[22]։ Այս օջախի արևելյան սահմանը ամենայն հավանականությամբ անցել է Ղազախի տարածքով, քանի որ Ղազախից արևելք, ինչպես կտեսնենք ստորև, տարածվում են այլ ենթատեսակի սակրեր։ Հաշվի առնելով նմանօրինակ սակրերի տարածման փաստը Լոռիում և Թրիալեթիում, հարմար ենք գտնում այդ օջախը պայմանականորեն անվանել լոռի-թրիալեթյան[23]։

II ենթատեսակ.— տարբերվում է առաջինից լայն աշխատաբերանով ($\alpha_1=72°—83°$) ու կոթառի ձևով ($\alpha_4=56°—82°$, $\alpha_5=38°—50°$)։ Վերջինս, որ ունի լայն մեջք, ստորին մասում նեղանում է (տատանումը $\alpha_4—\alpha_5$ միջև կազմում է 18°—32°)։ Այս ենթատեսակի սակրերը հիմնականում տարածված են Զանգեզուր-Ղարաբաղում։ Նկատենք, որ I և II ենթատեսակների սակրերի տարբերություններն առկա են նաև հատկանիշներում։ Որոք, ենթատեսակի ուղիղ կտրած թևիկներով ավարտվող աշխատաբերանները արտաքինից փոքրինչ ներճկված (V հատկանիշ) տեսք ունեն, իսկ թևիկների վրա կան ուռուցիկ նետաձև զարդանախշեր։ Ինչ վերաբերում է կոթառին, ապա այն մի կողմից ունի V-աձև, մյուսից՝ սանրաձև ուռուցիկ զարդանախշ։ Այս ենթատեսակի սակրեր հայտնաբերվել են Շիկահողում (նկ. 2₁₈) և Քաջարանում (նկ. 2₁₉)։ Ցավոք, այս նմուշները պատահական գյուտեր են, որը և դժվարացնում է նրանց ստույգ թվագրման հարցը։ Այսուհանդերձ, համանման ձևեր ունեցող սակրերի առկայությունը Ղարաբաղում, որոնք հայտնաբերված են մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի հետ, թույլ է տալիս զանգեզուրյան նմուշների համար առաջարկել նույն ժամանակաշրջանը։ Նկատենք, սակայն, որ Ղարաբաղում հայտնաբերված սակրերը, չնայած կոթառի ձևով կրկնում են զանգեզուրյան նմուշներին, բայց աշխատաբերանի տեսքով տարբերվում են նրանցից։ Վերջիններիս աշխատաբերանը մի դեպքում ավարտվում է ներս թեքվող թևիկներով (IV հատկանիշ), մյուսում՝ չի տարբերվում լոռի-թրիալեթյաններից, որը և հարկադրում է խմբավորել դրանք առանձին՝ III ենթատեսակի մեջ։ Մեր կարծիքով աշխատաբերանի այս ձևի նախադրյալներն արդեն առկա էին ուշ բրոնզի I փուլում։ Դրա ապացույցը կարող է հան-

---

19 Б. А. Куфтин, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, ВМГ, т. XII-Б, Тбилиси, 1944.

20 А. Калантар, Открытие дохалдского поселения близ Ленинакана, «Проблемы истории докапиталистических обществ», № 9—10, 1934, стр. 166—168.

21 Г. Б. Авалишвили, Погребение литейщика из могильника сел. Гантиади, СА, 1970, № 4, стр. 186.

22 Տե՛ս К. Н. Пицхелаури, Основные проблемы..., стр. 32.

23 Այս ենթատեսակում են դասվում Երևանում (ՀՊՊԹ, գույք № 156) և Դվինում (տե՛ս К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, рис. 49) հայտնաբերվածները, որոնք աշխատաբերանի ձևով ու համամասնություններով կրկնում են վերոհիշյալներին ($\alpha_1=70°$, 64°)։ Դժբախտաբար սրանք կոթառներ չունեն։

դիսանալ լճաշենյան նմուշը (նկ. 2₁), որն աշխատաբերանին հատուկ համամասնությունների շնորհիվ ընկնում է III խմբի մեջ (նեղ աշխատաբերան)։ Տարբերությունն այն է, որ Առաջաձորում (նկ. 2₂₀) և Քիրքիրջանում (նկ.2₂₁)[24] հայտնաբերված սակրերի վրա այդ հատկանիշը երևան է գալիս վերջնականապես ձևավորված տեսքով։ Սակայն այս փաստը ամենևին էլ չի նշանակում, թե նշված հատկանիշը (IV) բնորոշ է միայն ղարաբաղյան սակրերին։ Ուշագրավ է, որ այդ հատկանիշը բնորոշ է Խանլար-Գետաբեկի շրջանում տարածվածներին, որը և խոսում է, ինչպես արդեն նշվեց վերևում, միջակա շրջանների արտադրանքի վրա երկու հարևան օջախների ազդեցության առկայության փաստի մասին։ Հետևաբար, Ղարաբաղի տարածքը, սակրերի հետազոտման օրինակով, հանդես է գալիս իբրև անցումային, միջակա շրջան, որտեղ միաձուլվել են երկու օջախների «ձեռագրերը», ճաշակները։

Զանգեզուրյան օջախի հզորությունն են վկայում նաև Անդրկովկասի այլ վայրերում հայտնաբերված մի քանի սակրեր։ Այս տեսանկյունից հարկ է նշել Քիրքիրջանում (նկ. 2₂₂) և Մինգեչաուրում (նկ. 2) հայտնաբերվածները, որոնք աշխատաբերանների ձևերով կրկնելով լոռի-թրիալեթյաններին, կոթառների մանրամասներով կրկնում են զանգեզուր-ղարաբաղյաններին։ Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները, այդ օրինակները դասում ենք IV ենթատեսակի մեջ։ Նման սակր, բայց կոթառի որոշակի անհամամասնությամբ, հայտնի է Պերևիից (նկ. 2₂₃) և թվագրվում է մ. թ. ա. X—VIII դդ.։ Այս նմուշի համամասնությունները, ձևն ու զարդանախշը, ինչպես կտեսնենք ստորև, բնորոշ չեն ՎՍՍՀ տարածքում հայտնաբերվածներին, բայց, միաժամանակ, կոթառի անհամաչափ տեսքով այն տարբերվում է նաև Հարավային Անդրկովկասին բնորոշներից։ Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները, ենթադրում ենք, որ այս նմուշը պատրաստվել է տեղում, սակայն կրում է դրսից եկած ազդեցություն։ Ահա թե ինչու այն սոսկ պայմանականորեն ենք դասում IV ենթատեսակում։ Կարծում ենք, որ զանգեզուրյան օջախի ազդեցությունը երևան է գալիս նաև Ադրբեջանական ՍՍՀ հյուսիսային շրջաններում և Դաղստանում։ Այս դեպքում չպետք է շփոթեցնի տարածքների հեռավորությունն ու ազդեցությունների հնարավորությունը։ Դեռևս «մ. թ. ա. III հազարամյակի II և մ. թ. ա. II հազարամյակի I կեսին Արևելյան Եվրոպայի տափաստանների լայնարձակ տարածությունների մշակույթում նկատվում է մետաղի որոշակի աղբյուրների կայունացում։ Այս տեսակետից առաջատար տեղ է գրավում Կովկասը (հատկապես Ղափանի պղնձահանքերը—Օ. Խ.), որը... որպես մետաղագործական կենտրոն հզորության գագաթնակետին է հասնում մ. թ. ա. II հազարամյակի I կեսին և միայն մ. թ. ա. II հազարամյակի կեսերից... նվազում է կովկասյան մետաղի տիրապետությունը»[25]։

Զանգեզուրյան օջախից եկող ազդեցության մասին են վկայում Մեշրիֆում և Դերբենդում[26] հայտնաբերված սակրերի կոթառների ձևերը։ Վերջինների մեջ-

---

[24] К. Х. Кушнарева, Некоторые памятники..., рис. 2, 19; Я. И. Гуммель, Раскопки в Нагорно-Карабахской автономной области в 1938 г., «Изв. Аз. ФАН», 1939, № 4, стр. 77—78.

[25] Е. Н. Черных, История древнейшей металлургии Восточной Европы. М., 1966, стр. 44, 72.

[26] В. Г. Котович, М. В. Котович, Находки древних бронзовых топоров в Дагестане, «Кавказ и Восточная Европа в древности», М., 1973, стр. 77—83, рис. 3₃.

քը լայն է (α_4—α_5=17°—29°), իսկ մակերեսների վրա առկա է սանրաձև զարդանախշը։ Ավելին, մեշրիֆյան նմուշի աշխատաբերանին տեսնում ենք նեռաձև զարդը։ Նորը՝ բնորոշ միայն այդ սակրերի համար, վզիկի բացակայությունն է, որը և մատնանշում է դրանց տեղական արտադրանք լինելը։ Ինչ վերաբերում է աշխատաբերանների ձևերին, ապա մեշրիֆյան նմուշը հակվում է դեպի Արևելյան Վրաստանին հատկանշական սակրերը (խիստ ցած ձգված և նեղ), բայց ունի ուղիղ կտրած թևիկներ (նկ. 2_{24}), իսկ դերբենդյան նմուշի աշխատաբերանը կիսաշրջանաձև է (նկ. 2_{25})։ Այս սակրերը դասում ենք V ենթատեսակի մեջ։

VI ենթատեսակին պատկանող սակրերի աշխատաբերանները զուրկ են կայուն համամասնություններից, որովհետև ավարտվում են աստիճանաբար ներս թեքվող թևիկներով։ Այսուհանդերձ, այս սակրերը տարբերվում են զարբաղյան նմուշներից կոթառի ձևով, որով ավելի շուտ նրանք կրկնում են լոռի-թրիալեթյաններին։ Այս ենթատեսակի սակրեր հայտնի են Խանլարից (նկ. 2_{26}), Խաչբուլաղից (աշխատաբերանը կազմում է շրջանի գրեթե 2/3 մասը), Դաշ-Սալախլիից (նկ. 2_{27}), Քիրքիրջանից (նկ. 2_{28}) և թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով[27]։ Այս սակրերը տեղայնացվում են Խանլար-Գետաբեկի շրջանում։

Մ. թ. ա. XI—IX դդ. են թվագրվում նաև VII ենթատեսակին պատկանող սակրերը, որոնք նախորդներից տարբերվում են աշխատաբերանի նեղ և ձգված համամասնություններով (α_1=46°—59°)։ Ավարտվելով սուր թևիկներով (Հարավային Անդրկովկասի ուշ ժամանակաշրջանի սակրերին ոչ բնորոշ հատկանիշ), վերջինս բարձր վզիկի միջոցով միանում է նեղ կոթառին (α_4=35°—52°, α_5=33°—44°), որն ունի П կամ m-աձև ուռուցիկ զարդանախշ։ Հայաստանում, ներկա տվյալներով, այս ենթատեսակի սակր հայտնի է Լուսաձորից (նկ. 2_{29}), որը ցույց է տալիս, որ այն Հարավային Անդրկովկասին բնորոշ չէ։ Իրոք, այս ենթատեսակին պատկանող սակրեր հայտնի են Ախալքալակից (նկ. 2_{30-31}), Ցխինվալիից, Զեդա-Սիմոնեթիից, Զխիկվտայից (նկ. 2_{32}), Ալիից, Ատենիից, Լաջոբիսձիրիից, Օխուրեշիից, Զարիից, Գրոմիից, Բեժատուբանից[28], իսկ կաղապար՝ Ցխինվալիի մոտ գտնվող Նացարգորա վայրից։ Նման սակրի մոդել հայտնաբերվել է Վարդաշեն գյուղում (նկ. 2_{33})[29]։ Ինչպես տեսնում ենք, այս ենթատեսակի սակրերը հիմնականում տարածված են ինչպես Կախեթում, այնպես էլ Շիդա-Քարթլիում և Հարավային Օսեթիայում, որը ուշ

Г. Д. Агаев, В. А. Квачидзе, Клад бронзовых топоров из селения Мешриф, «Археологические открытия 1973 г.», (АО), М., 1974, стр. 442—443.

27 М. А. Кашкай, И. Р. Селимханов, նշվ. աշխ.: Я. И. Гуммель. Погребальный курган (№ 1) около Еленендорфа, «Изв. Аз. ГНИИ», Баку, 1931.

28 ՎՍՍՀ տարածքից հայտնաբերված սակրերի մասին տե՛ս К. Н. Пицхелаури, Локализация археологических культур на территории Восточной Грузии, «Труды Кахетской археологической экспедиции», Тбилиси, 1969, Նմանօրինակ սակրեր 1976 թ. մեծ քանակությամբ հայտնաբերվել են Շիդայում։ Այդ մասին մեզ տեղեկացրել է Կ. Ն. Պիցխելաուրին, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

29 Տե՛ս Д. Л. Коридзе, К истории..., табл. XIV, XV; Б. В. Техов, К истории изучения памятников энеолита и бронзы в нижнем течении реки Большой Лиахви, Тбилиси, 1963; Н. Н. Тушишвили, Маднисчальский могильник, Тбилиси, 1972.

բրոնզի վերջում հանդես է եկել իբրև կախեթյան մշակույթի տեղական օջախ։ Վերջինիս սահմանները հյուսիսում «...անցել են Կովկասյան լեռնաշղթայի նախալեռնային գոտիով, արևմուտքում՝ Սուրամի լեռնաշղթայի արևելյան մասով, արևելքում՝ Արագվի գետով, իսկ հարավում՝ Բեշտաշեն-Մագնիսչալա գծով»[30]։

Համամասնություններով այս ենթատեսակի մեջ է դասվում, որքան էլ այդ տարօրինակ է, Սառնաղբյուրում հայտնաբերվածը (նկ. 34)[31], որը կոթառի ձևով պատկանում է III տարբերակին։ Այս սակրի համամասնությունները բնորոշ չեն ՀՍՍՀ տարածքում հայտնաբերվածների համար, որը և ստիպում է նշված նմուշները (Լուսաձոր և Սառնաղբյուր) դիտել իբրև ներմուծված կամ դրսից եկող ազդեցությամբ տեղում պատրաստված։ Դա լավագույնս փաստարկվում է ոչ միայն համամասնություններով, այլև աշխատաբերանի զարդանախշով (Սառնաղբյուրի նմուշ), որը բնորոշ է միայն կողքիս-կոբանյան մշակույթին։

Սակրերի հետազոտությունների արդյունքները հանրագումարի բերելով հանգում ենք հետևյալին.

ա. Անդրկովկասի տարբեր վայրերում հայտնաբերված կամ պատահական գյուտեր հանդիսացող ուշ բրոնզի I փուլին պատկանող, ներկայումս դեռ սակավաթիվ սակրերը, զուրկ լինելով տարբեր մասերի կայուն համամասնություններից, ինչպես և տեղական բնորոշ հատկանիշներից, չեն տեղայնացվում։

բ. Հետագա զարգացման ընթացքում, կենտրոնաանդրկովկասյան մշակույթի տարանջատման հետևանքով, հանդես են գալիս ազգակից մշակութային ենթաշրջաններ (ընդունում ենք Ա. Ա. Իեսսենի կողմից առաջարկված տերմինը)։ Դրանցից հարավայինը ընդգրկել է Կուր-Արաքսի միջագետքը[32]։

Վերջինիս բաղկացուցիչ մասերն են հանդիսացել.

1. Լոռի-Թրիալեթյան օջախ.— հիմնականում տարածված են եղել միջին համամասնությամբ սակրերը։ Կիսաշրջանաձև տեսքով աշխատաբերաններն ավարտվում են ուղիղ կտրած թևիկներով։

2. Զանգեզուրյան օջախ.— բնորոշ են խոշոր համամասնություններով սակրերը։ Հատկանշական են արտաքինից թեթևակի ներճկվածքով աշխատաբերանները և լայն մեջք ունեցող կոթառները։

3. Խանլար-Գետաբեկյան օջախ.— աշխատաբերանի առանձնահատուկ ձևի պատճառով (ներս թեքվող թևիկներ) զուրկ են կայուն համամասնություններից։

Թվարկված օջախները սերտորեն կապված են եղել միմյանց հետ, որի հետևանքով հանդես եկած միջակա օղակներում հանդիպում են երկու հարևան օջախներին բնորոշ հատկանիշներով օժտված «հիբրիդային» բնույթ ունեցող սակրեր։

---

30 К. Н. Пицхелаури, Основные проблемы..., стр. 106.

31 Նյութը հրատարակության համար մեզ է տրամադրել Կ. Կ. Ղաֆադարյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

32 Հաշվի են առնված և մյուս նյութերի ուսումնասիրությունների արդյունքները։

ОПЫТ ЛОКАЛИЗАЦИИ СЕКИР

Кандидат историч. наук О. С. ХНКИКЯН

(Резюме)

Секиры, широко распространенные на территории Закавказья, были одним из ведущих типов оружия и орудий труда в эпоху поздней бронзы и раннего железа. Вопрос их локализации остается нерешенным, что не позволяет составить представление о характерных чертах и особенностях секир, принадлежащих отдельным локальным очагам. Учет всех признаков секир, а также пропорций лопастей, обухов и других деталей дает следующие результаты. Секиры I периода позднебронзовой эпохи, не обладая характерными пропорциями и локально-морфологическими особенностями, по имеющимся в настоящее время материалам не локализуются (рис. 2_{1-8}). В дальнейшем, вследствие раздробления единой Центральнозакавказской культуры, возникают родственные друг другу «культурные подрайоны» (термин А. А. Иессена). Южный культурный подрайон охватывал территорию Куро-Аракского междуречья. В его состав входили:

1) Лори-Триалетский локальный очаг— в основном были распространены секиры со средними пропорциями лопастей ($\alpha_1=60°—71°$) и обухов ($\alpha_4=48°—61°$, $\alpha_5=44°—55°$). Лопасти этих секир полукруглые с прямосрезанными крылышками (рис. 2_{9-17}).

2) Зангезурский локальный очаг— распространены секиры с большими пропорциями лопастей ($\alpha_1=72°—82°$). Отличаются от первых также формой обуха ($\alpha_4=56°—82°$, $\alpha_5=38°—50°$), который имеет широкую спинку и суживается в нижней части (в интервале 18°—32°). Концы прямосрезанных крыльев лопасти секир этой разновидности с боковых сторон чуть вогнуты (рис. 2_{18-19}).

3) Ханлар-Кедабекский локальный очаг— секиры этого очага ввиду специфики формы лопасти (в основном с постепенно закругляющимися концами) не имеют стабильных пропорций. По форме обуха они повторяют секиры Лори-Триалетского очага (рис. 2_{26-28}).

Перечисленные локальные очаги как отдельные звенья одного и того же культурного подрайона были тесно связаны друг с другом, вследствие чего наблюдается интерференция пропорций и признаков секир, на смежных территориях встречаются «гибридные» формы.

Секиры, распространенные в Восточной Грузии, в основном отличаются опущенной узкой лопастью ($\alpha_1=46°—59°$), которая при помощи высокой узкой шейки соединена с узким прямоугольным обухом ($\alpha_4=35°—52°$, $\alpha_5=33°—44°$, рис. 2_{30-33}). Вместе с тем встречаются секиры (Дигоми, Кодисцкаро, Самтавро и др.) с эллипсовидной лопастью, нехарактерные для Армении.